Ֆռանկ պատրիք եկին և զնորին նշխարն գտին» (էջ 266), «Այս այն Թահմազղուլին է, որ Էջմիածնի քարինս հրամանաւ շահին հանեալ առաքեաց ի Սպահան...» (էջ 202) և այլն: Այդ կառուցվածքային միավորները խմբավորվել են իբրև ***նախընթաց տեքստի համառոտում կամ հիշեցում*** միավոր: Այս միավորն էլ ունի իր տեքստային որոշ կաղապարները: Ներտեքստային կառուցվածքային այս միավորի նպատակն է կապակցել պատմության տարբեր դրվագներն ու ստեղծել միասնականությամբ հատկանշվող պատում: Ինչպես հետևյալ օրինակում է. «***Արդ՝ որպէս կանխաւ պատմեցաք վասն Դաւիթ կաթուղիկոսին, թէ գնաց ի դուռն շահին և արար ամբաստանութիւն վասն Մելքիսէթ կաթուղիկոսին, և շահն բարկացաւ ի վերայ Մելքիսէթի, ընկէց ի կաթուղիկոսութենէ և առաքեաց ի Սպահան: Իսկ Դաւիթ կաթուղիկոսն մնաց անդէն ի բանակին, ի դուռն շահին:*** Անդ էր և Ամիրգունայ խանն, որ էր տէր և իշխան ամենայն գաւառին Արարատու և սուրբ Էջմիածնի» (էջ 192): Հավելեմ միայն, որ ընդգծվածը ***նախընթաց տեքստի համառոտում կամ հիշեցում*** ներտեքստային միավորն է, իսկ շարունակությամբ ապահովվում է իրադարձությունների հաջորդական վկայագրումը:

Մյուս ներտեքստային միավորը, որ առանձնացվել է, կարելի է ձևակերպել այսպես. ***սեփական տեքստի կրկնաբանություն-հիշեցում կամ նախընթաց շարադրանքի պարագրկում:*** Սա շատ առումներով նման է նախորդ միավորին, բայց հիմնական տարբերությունն այն է, որ Դավրիժեցին այս դեպքում շատ անգամ սահմանափակվում է նշելով, որ այդ մասին արդեն խոսել է և երկար ներբերումներ չի անում: Այս միավորները շատ ժամանակ որևէ ընդարձակ հատվածի համառոտումն են լինում՝ որևէ կաղապարային միավորով (հիմնականում՝ «որպէս որ ասացի», «որպէս պատմեցաք») պարագրկված, ինչպես՝ «Թէպէտ եղեն երկու կաթուղիկոսք, ***որպէս որ ասացի***» (էջ 58), «առման բերդին Գանջայու